Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

ԳԱՅԼ ԿԱՐՄԻՐ

ՊԱՏՄԱԿԱՆ ՊՈԵՄ

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ

891.99-93 5001
Ղ-30 Ղազարյան, Ղ.
Ստեղծ:
Հր. 104.

Հ. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

891.99-93
Հ-30

ՍՏՈՒԳՎԱԾ է 1961 թ.

ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

ՊԱՏՄԱԿԱՆ ՊՈԵՄ

ֆ001 Ա II/30620

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿԿ ԿԻՍ ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԲԱԺԻՆ
ԵՐԵՎԱՆ 1943

Շապիկը եվ իլուստրացիաները
ժողովրդական նկարիչ Հ. ԿՈՋՈՅԱՆԻ

Պատ. խմբագիր՝ Դ. ԴԵՄԻՐՃՅԱՆ

ՎՖ 01065։ Պատվեր 254, Տիրաժ 3000. Տպագրական 1,1 մամ.
Ստորագրված է տպագրության 16/IV

Հայպետհրատի տպարան, Երևան, 1943

Ա.

Մուշեղ իշխանը, ցեղից Մամիկոնի
Մարզպան էր վաղուց երկրում հայրենի։
Հաղթանդամ էր նա և լայնաթիկունք,
Հասակը բարդի, սևորակ աչք—ունք։
Նրա աղեղը երկար, հաստավոկ
Չէր կարող ձգել աշխարհում ոչ ոք։
Քանի՛—քանի՛ նենգ ու չար թշնամի
Մահ էր Տարոն՝ թարանի, տանի,
Բայց քաջ Մուշեղի թուրը երկայրի
Պաշտպան էր կանգնել երկրին հայրենի։
Բայց ի՞նչ կա արդյոք հավիտենական
Վառ արևի տակ թարմ ու տևական.
Ժաման օրերը մռայլ ու լացկան
Եկան, հերոսի գլխին էլ իջան։
Մտածում էր նա. ո՞ր քաջը պիտի
Մահվանից հետո իրեն հաջորդի,
Որ սանձահարվի վայրագ թշնամին...
Ու կանչեց իր մոտ նա Գայլ Վահանին։
Վահան իշխանն էլ քաջ էր, անվեհեր,
Թշնամու առաջ վիզը չէր թեքել,
Իրրև անսահման քաջության նշան
«Գայլ» անունն էին պարգևել նրան։
— Որդյակ իմ Վահան,— քաջ Մուշեղն ասաց.—

Իմ անցյալ կյանքը հայտնի է քեզ քաջ։
Տարիքս հարյուր քսան է արդեն,
Ո՛չ մի թշնամի չի հաղթել ինձ դեռ։
Ուժասուն և երեք մարտ եմ ես մղել,
Բոլոր մարտերում հաղթող եմ եղել,
Սլաքով եմ սրբել արյունը դեմքիս,
Որ քրտինքի տեղ իջել է ճակտիս։
Եվ ազնիվ ցեղից մեր Մամիկոնյան
Չի՛ եղել երբեք ոչ մի դավաճան։
Մեր հայրենիքի պատիվը, որդիս,
Միշտ բարձր եմ դասել ես ամեն բանից։
Ով հայրենիքի համար է մեռնում,
Նա հուր-հավիտյան անմահ է մնում։
Հիմի ես ծեր եմ, թույլ ու դողդոջուն,
Զայնս մարտերում ուժեղ չի հնչում։
Դու ես, սիրելիս, օգնականը իմ,
Ինքըդ էլ գիտես, որ ժառանգ չունեմ։
Իմ որդին մեռավ քսան տարեկան,
Որ հայրենասեր ու քաջ էր այնքան։
Իշխիր մեր երկրին իմ մահից հետո,
Եվ այնուհետև՝ ժառանգները քո։
Գիտցիր, իմ կարիճ, որ արքան պարսից
Վաղուց, շատ վաղուց թշնամի է ինձ։
Ուղարկել է նա Միհրան իշխանին,
Որ գա, տիրանա Տարոնո երկրին,
Հուր ու սուր փռի, արյուն, արտասուք,
Եվ գերի տանի մայրեր ու մանուկ,
Շղթա դնի իմ ոտին ու ձեռքին,
Տանի Պարսկաստան, մատնի տանջանքի։
Նենգ, խարդախ է նա, զորքերն անհամար,
Մի չար պատուհաս մեր երկրի համար։
Ես այսպես ասի Միհրանին այն նենգ.
«Հայոց աշխարհից ելեք, հեռացեք,
Էլ մի զարթեցնեք առյուծին քնած,
Կատաղի դայլին՝ բարքը կորցրած։
Նա, ով որ ուժասուն հազարին հաղթեց,

Քեզ էլ կհաղթի, ի՞նչ մի բան է մեծ»։
Չեմ ուզում թափվի ես անմեղ արյուն,
Ավերը, ավերած լինի մեր երկրում։
Գնա՛ նրա մոտ, ասա՛ ու խոսիր,
Քո իմաստությամբ նրան համոզիր։
— Ես է՛լ, ո՞վ իշխան, հայր իմ թանկագին,
Չեմ զլանանի իմ հայրենիքին։
Ես էլ մեռնելը, սրբազան մարտում,
Ամեն մի բանից վեր եմ համարում։
Թեև ուժասուն ուժ տարեկան եմ ես,
Բայց դեռ կռվում եմ ջահելների պես։
Շատ Միհրաններ են եկել, գնացել,
Արյան հեղեղ է մեր երկրով անցել,
Բայց մեր աշխարհի ժողովուրդը քաջ
Երբեք չի չոքել թշնամու առաջ։
Երդվում եմ իշխան, պատվով իմ երկրի,
Որ պարսիկը մեր հողին չի տիրի։
Թող նենգ Միհրանը ասի ու խոսի,
Իշխանի գլխից մի մազ չի պակսի։

Բ.

Ասաց Վահան, ելավ խսկույն
Քաջ Մուշեղից բաժանվեց
Եվ մի դեսպան պարսից իշխան
Միհրանի մոտ ուղարկեց։
Երբ դեսպանը գնաց, հասավ
Իշխանական վրանին,
Դրուխ տվեց, այսպես ասաց
Պարսից իշխան Միհրանին.
— Իշխանը մեր՝ քաջն Վահան,
Պատվիրեց ինձ՝ ասեմ քեզ.
«Արի հաշտվե՛նք, ել ու գնա,
Մի՛ ապառնա զորքով մեզ»։
Եվ բորբոքվեց Միհրանը չար
Ու հայհոյեց դեսպանին.

— Գնա՛,— ասաց,— ասա նրան,
Ձեր նորաբույս իշխանին.
«Մինչև որ դու շղթայակապ
Ինձ չհանձնես Մուշեղին,
Չե՛մ հեռանա այս աշխարհից,
Ես ոսոխն եմ ձեր ցեղի»։
Երբ ստացավ Վահանը քաջ
Պատասխանը Միհրանի,
Մաքում դրեց ելնի, գնա
Պարսից զորքը կոտորի։
Մուշեղին նա տարավ, փակեց
Ամրոցի մեջ Ողական,
Իսկ Միհրանին նամակ գրեց
Եվ ուղարկեց մի դեսպան։
«Քա՛ջդ Միհրան, վեհ ու անպարտ,—
Գրել էր նա նամակում,—
Այսօրվանից իմ տիրոջ հետ
Մի պայման եմ ես կնքում։
Կհանձնեմ քեզ ես Մուշեղին
Ոտն ու ձեռքը շղթայված,
Թե ինձ հանձնես այս երկիրը
Մատանիով հաստատված։
Ես էլ շուտով կգամ քեզ մոտ
Թև ու թիկունք լինելու,
Ինձ թշնամի իշխաններից
Անհագ վրեժ լուծելու»։
Կարդաց Միհրան այս նամակը,
Տվեց իսկույն պատասխան.
«Գնա՛, ասա քո տիրոջը
Համաձայն եմ ես, իշխան»։

Գ.

Ընդառաջ գնաց Միհրանը զորքով
Ընդունեց նրան մարտական կարգով։
— Այսուհետև մենք եղբայր ենք, Վահան,

Ո՞ր քաջը կելնի էլ մեր հանդիման,—
Ասաց Միհրանը, ժպիտը դեմքին,
Նստելով հայոց իշխանի կողքին։—
Դու նախ տիրացիր Աստղոն ամրոցին,
Կազմ ու պատրաստ է վաղուց այրուձին։
— Ո՛չ, տեր իմ Միհրան, չի լինի այդպես
Արդեն ամեն ինչ մտածել եմ ես։
Պետք է տիրանալ նախ Օձ քաղաքին,
Այնտեղ է պահված Մուշեղի ոսկին։
Տուր ինձ չորս հազար ընտիր այրուձի,
Չի մնա տեղում մոխիրը Օձի։
— Թող այդպես լինի, եղբա՛յր իմ անգին,
Հավատում եմ ես քո տաք խոսքին։
Այրուձին առած փութով սլացավ
Եվ Օձ քաղաքի դարպասին հասավ։
Տեսան՝ փոքրիկ է դարպասը, նեղլիկ,
Չեն կարող անցնել խմբովին մարդիկ։
Եվ զորքը մեկ-մեկ անցավ դարպասով,
Դիմավորեցին նրանց մերկ սրով.
Մերկացրին նրանց, մորթեցին մեկ-մեկ,
Կտրած քթերը լցրին պարկի մեջ։
Սուրհանդակ գնաց իշխան Միհրանին,
Թե Օձ քաղաքը դիմադրեց զորքին,
Ուղարկիր էլի այրուձի, որ մենք
Գրոհի գնանք, քաղաքին տիրենք։
Եվ երկու հազար այրուձի կրկին
Գնաց ու հասավ նույն Օձ քաղաքին։
Այդ երկու հազար այրուձին կրկին
Արժանի եղավ ճիշտ նույն վիճակին։
«Ցնծա՛, եղբայր իմ, Օձին տիրեցինք,
Մեր ուժի առջև ի՞նչն է անառիկ։
Վեց հազար հոգու հարվածների տակ
Հսկա քաղաքը դարձավ ավերակ։
Ունենալու ենք ցնծության հանդես,
Պետք է անպատճառ գաս ու մասնակցես։
Փառք մեզ ստեղծող անմահ Որմզդին»։

Այսպիսի նամակ հասավ Միհրանին։
Ելավ Միհրանը ցնծությամբ լցված,
Հայոց իշխանի պալատը գնաց,
Դրկեց, համբուրեց մեր քաջ Վահանին։
Եվ ուրախության, խնդության պահին
Քթերով լիքը պարկերը բերին,
Պարսիկ իշխանի առջևը դրին։
Միհրանը գոչեց.— Այս ի՞նչ է, իշխան,
Ասա, այս ի՞նչ է, տուր ինձ պատասխան։
— Չե՞ս ճանաչում դու։ Քթերն են զորքիդ,
Կուզե՞ս, համարիր՝ վեց հազար է ճիշտ։
Դու ուզում էիր Մուշեղ իշխանին
Շղթայած հանձնել պարսից արքայի՞ն,
Դու կարծում էիր իմ երակներում
Նենգ դավաճանի արյո՞ւն է եռում,
Դու կարծում էիր, թե մենք օտարին,
Նենգ բռնակալին կլինենք գերի՞...
Ա՛ռ քեզ, մարդակեր, ա՛ռ, մի զարկ էլ քեզ,
Դո՛ւ էլ չքացիր քո զորքերի պես։
Ասաց, ու տեղը մի զարկով ուժգին
Մխեց բռնակալ Միհրանի կրծքին,
Ապա գլուխը մարմնից բաժանեց,
Պարսից արքային «նվեր» ուղարկեց։
Չէ՞ որ Մուշեղը ասել էր. «Վահա՛ն,
Քո խմաստությամբ դու որսա նրան»։

Դ.

Երբ որ տեսավ Խոսրով արքան
Գլուխը իր իշխանի,
Կատաղություն իջավ վրան
Եվ մտածեց՝ ի՞նչ անի։
Ապա կանչեց մի զորավար,
«Գնա՛,— ասաց,— քաջ Վախթանգ,
Շուտով հասիր դու Հայաստան
Տարոնն արա քարուքանդ։

Եկավ Վախթանգ, կարգի բերեց
Իր զորքերն ու զորական
Եվ երեսուն հազար հոգով
Ճամփա ընկավ Հայաստան։
Երբ Վախթանգը եկավ, հասավ
Ապահունյաց գավառին,
Մի այսպիսի նամակ գրեց
Հայոց Վահան իշխանին.
«Ողջո՛ւյն Հայոց մեծ իշխանին
Քաջաբազուկ և արի,
Դու եկ ու իմ ասածները
Ճշմարտությամբ կատարիր։
Թեև Միհրան եղբորորդուս
Մահվան վրա վշտացա,
Բայց քո հզոր իմաստության,
Խելքի վրա զարմացա։
Խաղաղությամբ ու սիրով եմ
Այս աշխարհը ես եկել,
Կարող ես դու այսուհետ էլ
Կառավարել անարգել։
Միայն թե եկ ու երդում տուր,
Որ հարկ կտաս արքունի,
Միշտ կլինես հեղ, հնազանդ
Ինձ ու պարսից արքային»։
«Ողջո՛ւյն պարսից մեծ իշխանին
Անմիտ, ստոր, թույլ ու վատ,—
Այսպես գրեց Վահանը իր
Ախոյանին զորավար։—
Թեև Միհրան եղբորորդուդ
Մահվան վրա խնդացի,
Բայց քո ստոր անմտության
Վրա սաստիկ ես լացի։
Թե մտել ես երկիրը մեր
Ուրախությամբ ու սիրով,
Ինչո՞ւ ամրոց ես կառուցում,
Զորք ես բերել հազարով։

Քեզ նման նենգ, ստոր մարդիկ
Շատ են անցել մեր երկրով,
Անցել են շատ թշնամիներ
Նիզակներով ու սրով,
Մեր արյունը դեռ է դառել
Դիակներն էլ՝ մեծ լեռներ,
Ամայացել են բազմաթիվ
Քաղաքներ ու ավաններ,
Բայց հայը միշտ դուրս է եկել
Սուր ու վահանը ձեռքին,
Պաշտպանել է երկիրը իր,
Չի՛ խոնարհվել օտարին։
Գիտեմ, որ դու խաբում ես ինձ,
Բայց ահ չունեմ քեզանից,
Ե՛լ ու գնա, թե չես ուզում
Մահ ստանալ ինձանից»։

Ե.

Բարկացավ սաստիկ իշխանը Վախթանգ,
Կազմեց այրուձի թվով ութ հազար
Եվ հրամայեց, որ գնան չուտով
Տարոնը անեն դեռնին հավասար։
Գուժկաններ եկան Արջունց իշխանից,
Թե պարսից զորքը Տարոն է դալիս։
Սուրհանդակ գնաց Վահան իշխանից
Հարևան բոլոր հայ իշխաններին,
Թե՝ «Զար թշնամին կռվի է դալիս,
Եկեք միասին քշենք օտարին։
Լավ է մահանալ հասակով կանգնած,
Քան թե կյանք վարել միշտ ծնկի եկած»։
Քաջն Վահանին օգնության եկան,
Առած այրուձի, զորք ու զորական,
Հաչեանից իշխանը երեք հազարով,
Արջունց իշխանը երկու հազարով,
Պալունյաց իշխանը երեք հազարով,
Եղնուտա իշխանն իր հինգ հազարով,


1943

Որդին՝ Սմբատը, իր վեց հազարով։
Դուրս եկավ Վահան անվեհեր ու քաջ
Կանգնեց բովանդակ զորքերի դիմաց,
Ասաց. «Լսեցե՛ք զորք ու զորական,
Քաջերի համար պարտություն չկա։
Վտանգի տակ է հայրենիքը մեր
Եվ արյան գնով պետք է պաշտպանել։
Եվ այս սրբազան ու ահեղ մարտում
Դուք չխնայեք անարգ թշնամուն։
Դե՛, շուտով ելնենք մենք անվախ ու քաջ
Մեր հայրենիքի թշնամու առաջ»։
Այրուձին իսկույն առաջ սլացավ
Գետի ջրերը ճեղքեց ու անցավ։
Բորբոքվեց մի թեժ, կատաղի կռիվ,
Սարսեց ու դողաց թշնամին անթիվ։
Իսկ երբ Հաչտենից իշխանը արի
Կարեց գլուխը նենգ զորավարի,
Հինգ հարյուր հոգի մահից ազատված
Փախան, զենքերը դաշտերում թողած։

Զ.

Կատղած ու փրփրած Վախթանգը կրկին
Սաստիկ հրաման տվեց իր զորքին.
«Ասուր զորավար, տար տասը հազար
Տարոնը դարձրու գետնին հավասար»։
Եկավ Ասուրը կատղած ու ցասկոտ
Եվ բանակ դրեց Մեղտի գետի մոտ։
Վեց հազար զինվոր և որդուն առած
Վահանն Ասուրի զորքի դեմ գնաց։
Առավոտ էր դեռ տոթաշունչ ամրան,
Երբ որ զորքերը իրար դեմ առան։
Միայն Մեղտին էր անցքերին վկա,
Սակայն արյունոտ դեպքին անզգա,
Հրաժեշտ էր տալիս ու երգում երգեր.
«Մնաք բարով իմ սիրունիկ ափեր»։

Խառնվեցին իրար, աղաղակ ու կանչ
Ձիերի խրխինջ, թրերի շառաչ...
— Ա՛յ դու կատաղի, չարաբարո Գայլ,
Ա՛յ դու անամոթ ու դավաճան այր,
Գիտես՝ արքային պիտի ծառայես,
Ինչո՞ւ ես տանջում թե՛ քեզ և թե՛ մեզ։
Ուզես, թե չուզես, հարկ պիտ վճարես,
Թե չվճարես, կատկես չան պես։
Այսպես ձայն տվեց Ասուր Վահանին,
Հայոց զորքերի քաջ զորավարին։
— Այո՛, գայլ եմ ես, չարամի՛տ Ասուր,
Իմ առջև թե դու, թե մի քոսոտ ուլ։
Որքան զորք բերեք դուք իմ հանդիման,
Գայլի պես կուտեմ առաջվա նման։
Պատասխան տվեց Ասուրին Վահան
Եվ սլանալով հարձակվեց վրան։
Սակայն Վահանի տեղից սարսափած,
Ասուրը իսկույն սլացավ, գնաց։
Նրա դեմ ելավ Վահանի որդին·
— Այդ ո՞ւր ես փախչում, ա՛յ դևի որդի։
— Հեռու ինձանից, ա՛յ հարճի որդի,
Մանուկի հետ ո՞նց դուրս գամ ես մարտի։
— Հենց այդ մանուկից դու մահ կստանաս,—
Գոչեց Սմբատն ու թուրը պտտեց։
Ասուրի ձիու գլուխը թռավ,
Ինքն էլ գլորվեց ու գետին ընկավ։
Եվ քաջ Սմբատի թրի հարվածով
Ասուրի գլուխն էլ գլորվեց դաշտով։
Հենց այդ միջոցին ձայն լսվեց հեռվից·
— Ո՞ւր ես, իմ որդյակ, տե՛ս, նեղում են ինձ,
Տասը հոգի են դուրս եկել իմ դեմ,
Ուժս չի պատում նրանց դեմ կռվեմ։
Եվ սրաթռիչ արծվի նման
Դուրս եկավ Սմբատ տասին հանդիման,
Ասուրի որդու գլուխը կտրեց,
Թշնամու զորքը կոտորեց, ցրեց։

Նոր թափ ստացավ Վահանը կրկին,
Փախուստի մատնեց թշնամու զորքին
Եվ ութ հազարից միայն քչերը
Փախան, երբ իջավ խավար գիշերը։
Իջավ խավարը մութ ու սևորակ,
Արյուն ու դիակ առնելով իր տակ։
Եվ գիշերային խավարի միջում
Կույր բուն էր միայն հուսահատ ճչում,
Մեղմին էր անվերջ հոսում ու երգում,
Վիրավորները ցավերից տնքում։

Է.

Երբ որ Վահանը տուն վերադարձավ
Ողջ ժողովուրդը ընդառաջ ելավ։
Պարով ու երգով շրջան կազմեցին,
Փառքի ու գովքի երգեր երգեցին.
«Սարերից վայրի
Գազաններ իջան,
Պարսից լեշերը
Կերան, դիրացան։
Կզաքիսն այնքան
Մարդու միս կերավ,
Որ մի ահագին
Արջի չափ դառավ։
Անդղներն այնքան
Կերան, կշտացան,
Որ էլ վերանալ
Չկարողացան։
Հպարտ աղվեսը
Շատ միս ուտելուց
Ուռեց ու դառավ
Մի հսկա առյուծ։
Գայլը չատակեր
Այնքան միս լափեց,
Որ գետին ընկավ

A II 30620

Եվ խսկույթ պայթեց։
Մկներն էլ այնքան
Լեշեր կբեցին,
Որ ոտիկները
Իսպառ մաշեցին...
Կեցցե՛ մեք հզոր
Իշխան Գայլ Վահան,
Տարոնո երկրի
Հերոս աննման...

Քաջ Գայլ Վահանի
Վերջին մարտն էր սա,
Դրանից հետո
Շուտով մահացավ։
Սուգ ու վիշտ պատեց
Հայոց աշխարհին,
Երբ քաջ իշխանին
Հանձնեցին հողին։
Ներսն հաջորդեց
Իր Սմբատ որդին՝
Կարիճ զավակը
Իր ժողովրդի։

Գայլ Վահանի պես անհաղթ հերոսներ
Հայ ժողովուրդը շատ է ունեցել։
Եվ ահա, հիմա, երբ այս օրերում
Արդար, սրբազան մարտեր ենք վարում,
Երբ հայ հերոսն էլ շատերի կողքին
Վիզը չի թեքում ֆաշիստի զենքին,
Երբ իր արյունը, կյանքը թանկագին
Նվեր է բերում իր հայրենիքին,
Այդ հերոսների երակների մեջ
Մեր հին քաջերի արյունն է անշեջ,
Որ բորբոքվում է, հուզվում ու եռում,
Երբ հայրենիքին վտանգ է սպառնում...

ԳԱԱ Հիմնարար Գիտ. Գրադ.
220030620

(064)

ԳԻՆԸ 2 Ռ. 10 Կ.

А II 30620

А. Айрапетян
ВОЛК ВАГАН
(На армянском языке)
Армгиз, Ереван, 1943